ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2021/1Շ

ք. Երևան « 12 » « 07 » 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ապառաժ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,095,411,605 (մեկ միլիարդ իննսունհինգ միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ, որից 182,568,601 (մեկ հարյուր ութսուներկու միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր մեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ապառաժ»ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ. ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011025823	ՀՀ 15700-04636690100
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00440378
գլխավոր քարտուղար	տնօրեն
Հ. Բատիկյան	Դ. Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 12 » « 07 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2021/17 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ Սյունիքի մարզի Տ-8-22,/Մ-2/-Վարդավանք-Խդրանց-Ագարակ ավտոճանապարհի կմ 0+000-կմ13+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

NN ը/կ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը Դրամ	Ընդհանուր արժեքը դրամ
1	2	3	4	5	6
I	**Ցանցե ցանկապատերի քանդում և նոր ցանկապատերի տեղադրում**				
1	Գոյություն ունեցող ոչ պիտանի ցանցե ցանկպատերի ապատեղայում	գծ.մ	174	3,85	669,90
2	Նոր ցանցե ցանկապատերի տեղադրում h=1.5մ	գծ.մ	174	6,36	1106,64
	Խողովակների հիմքի միաձույլ բետոն B15 0.25x0.25x0.3մ	մ3	1,44	49,58	71,40
	Մետաղական խողովակ d=76x2.5մմ, 1 գծ.մ=6.25կգ	գծ.մ	171,6	3,39	581,72
	Մետաղական ցանց 50x50мм	մ2	261	0,90	234,90
				1.Ընդամենը	2 664,56
II	**Հողային աշխատանքներ**				
1	III10դ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ3	2830	0,43	1216,90
2	Նույնը V10զ գրունտը	մ3	1400	0,76	1064,00
3	III10դ գրունտի մշակում էքսկավատորով/0.65մ³/, բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	1080	0,67	723,60
4	տեղափոխում լիցք 1.0կմ	տոն	2052	0,287	588,92
5	V10զ գրունտի մշակում էքսկավատորով/0.65մ³/, բ/, բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	760	1,19	904,40
6	տեղափոխում լիցք 1.0կմ	տոն	1596	0,287	458,05
7	V10զ գրունտի մշակում էքսկավատորով/0.65մ³/, բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	220	1,19	261,80
8	տեղափոխում լիցք 2.0կմ	տոն	462	0,359	165,86
9	V10զ գրունտի բարձում	մ3	440	1,19	523,60
10	V10զ գրունտի տեղափոխում պահուստից ՝ 2կմ-ից լիցքի իրականացման համար	տոն	924	0,359	331,72
11	III10դ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով/0.65մ3/	մ3	1600	0,962	1539,20
12	տեղափոխում լցակույտ միջինը 6.0կմ	տոն	3040	0,593	1802,72
13	Նույնը V10զ գրունտը	մ3	590	1,947	1148,73
14	տեղափոխում լցակույտ միջինը 6.0կմ	տոն	1239	0,593	734,73
15	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	7460	2,240	16710,40

16	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ3	6740	0,631	4252,94
17	ՊԿ24+06-ՊԿ24+10 հատվածում աջից քարաբեկորների VII20ա փխրեցում/0.6-4.0մ3/ պայթանցքային լիցքերով, պայթանցքի խորությունը մինչև 0.5մ	մ3	18	5,720	102,96
				2.Ընդամենը	**32530,53**
III	**Ճանապարհային պատվածք**				
1	Գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի քլնգում, խտացում h=15սմ	մ3	12222,6	0,76	9289,18
2	խճակոպճավազային շերտ C5 h=12սմ	մ2	81484	1,23	100225,32
3	Բիտումով մշակված խճավազային խառնուրդ h=8սմ	մ2	77759	5,46	424564,14
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ2	76270	4,24	323384,80
				3.Ընդամենը	**857463,44**
IV	**Կողնակներ/Обочины**				
1	Ցամաքուրդային գրունտի բարձում	$մ^3$	8206	0,62	5087,72
2	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 2.0կմ-ից կողնակների իրականացման համար	տոն	16001,7	0,36	5760,61
3	Կողնակների հարթեցում /34191m2/ և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=24սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	8206	0,62	5087,72
				4.Ընդամենը	**15936,05**
V	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ խողովակներ տակ h=10սմ	մ3	7,78	5,72	44,50
2	Մետաղական խողովակի տեղադրում d=325մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	129,9	31,78	4128,22
3	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	132,563	1,83	242,59
4	Գլխադիրների միաձույլ բետոն B15-32հատ	մ3	9,6	102,84	987,26
5	Խճակոպճավազային շերտ C6 h=12սմ	մ2	3725,4	1,21	4507,73
6	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ2	3474,9	4,18	14525,08
7	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	204	5,44	1109,76
8	Մետաղական խողովակ 57x3,0մմ	գծ.մ	108	5,28	570,24
	բետոն B15	մ3	3,6	47,56	171,22
	Առավելության	հատ	36	18,96	682,56
				5.Ընդամենը	**26969,17**
VI	**Մուտք**				
1	Ավազակոպճային շերտ խողովակներ տակ h=10սմ	մ3	3,77	5,72	21,56
2	Մետաղական խողովակի տեղադրում d=325մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	62,9	31,78	1998,96
3	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	64,2	1,83	117,49
4	Գլխադիրների միաձույլ բետոն B15-18 հատ	մ3	5,4	102,83	555,28
5	Խճակոպճավազային շերտ C6 h=12սմ	մ2	661,1	1,21	799,93
6	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ2	661,1	4,18	2763,40
				6.Ընդամենը	**6256,62**
VII	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**				
1	Գոյություն ունեցող տարբեր բացվածքների ջրթող խողովակների մաքրում ձեռքով-26հատ	մ3	315,2	2,90	914,08
2	բարձում մաքրում և տեղափոխում լցակույտ միջինը 6.0կմ	տոն	598,88	0,98	586,90
3	d=530մմ մետաղական խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15-4 հատ	մ3	2,56	102,84	263,27
4	d=720մմ մետաղական խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15-4 հատ	մ3	4,8	102,84	493,63
5	Նույն խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B12.5-4 հատ	մ3	4,04	71,52	288,94
6	d=0.75մ ե/բ խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15-2հատ	մ3	2,4	102,84	246,82
7	Նույն խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B12.5-2 հատ	մ3	2,02	71,52	144,47

8	d=1.0մ ե/բ խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15-28հատ	մ3	78,4	102,84	8062,66
9	Նույն խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B12.5-28հատ	մ3	39,4	71,52	2817,89
10	d=1.25մ ե/բ խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15-14հատ	մ3	56	102,84	5759,04
11	Նույն խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B12.5-14հատ	մ3	22,54	71,52	1612,06
12	Խողովակների գլխադիրների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	251	1,25	313,75
12	ՊԿ119+91 և ՊԿ120+78 խողովակների երկարացում ելքի մասում 3-ական մետր				0,00
ա	Ավազակոպճային շերտ h=10սմ/	մ3	1,6	6,28	10,05
բ	Օղակների հիմնատակի միաձույլ բետոն B12.5	մ3	3,72	58,20	216,50
գ	Ե/բ բլոկների տեղադրում N13	հատ	6	116,82	700,92
դ	Քսուկային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	18	3,55	63,90
ե	Սոսնձային ջրամեկուսացում	մ2	6	6,14	36,84
զ	Գլխադիրի հիմքի միաձույլ բետոն B15-2հատ	մ3	6	74,39	446,34
13	ՊԿ100+73 խողովակի երկարացում ելքի մասում 2- մետր				0,00
ա	Ավազակոպճային շերտ h=10սմ/	մ3	1	6,28	6,28
բ	Օղակների հիմնատակի միաձույլ բետոն B12.5	մ3	1,6	58,10	92,96
գ	Ե/բ բլոկի տեղադրում N14	հատ	2	139,50	279,00
դ	Օղակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	7,4	3,55	26,27
զ	Գլխադիրի հիմքի միաձույլ բետոն B15	մ3	3,75	74,39	278,96
				7.Ընդամենը	**23661,53**
VIII	**Հենապատեր**				
Ա.	Վերին հենապատեր				
1	III10դ գրունտի մշակում էքսկավատորով/0.65մ³/, բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	127	0,67	85,09
2	տեղափոխում լցակույտ 6.0կմ	տոն	241,3	0,590	142,37
3	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ3	43	0,46	19,78
4	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ3	10,5	6,28	65,94
5	Հիմքի խամքարե բետոն B20	մ3	61,26	51,38	3147,54
6	Իրանի խամքարե բետոն B20	մ³	59,49	52,44	3119,66
7	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	182,2	1,25	227,75
8	Հենապատի երեսապատում սվաղով	մ2	101,4	1,97	199,76
9	ՊԿ46+80-ՊԿ47+00 վերին հենապատի իրանի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ3	13	68,81	894,53
10	Հետադարձ լիցք	մ3	43	0,09	3,87
11	Ստորին հենապատեր				0,00
12	III10դ գրունտի մշակում էքսկավատորով/0.65մ³/, բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	212	0,67	142,04
13	տեղափոխում լցակույտ 6.0կմ	տոն	402,8	0,590	237,65
14	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ3	16	0,46	7,36
15	ՊԿ48+39-ՊԿ48+72 աջից գոյություն ունեցող բետոնե պարապետների քանդում էքսկավատորով/0.65մ3/, բարձում	մ3	5,28	1,40	7,39
16	տեղափոխում լցակույտ 6.0կմ	տոն	10,032	0,590	5,92
17	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ3	35,49	6,28	222,88
18	Հիմքի խամքարեբետոն B20	մ3	196,84	51,38	10113,64
19	Իրանի խամքարե բետոն B20	մ³	202,5	52,44	10619,10
20	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	522,65	1,25	653,31
21	Հետադարձ լիցք	մ3	16	0,09	1,44
				8.Ընդամենը	**29917,01**
IX	**Ճանապարհի կահավորում**				
1	Ճանապարհային նշաններ				
	Մետաղական խողովակ 57x3,0մմ	գծ.մ	330	5,35	1765,50

	բետոն B15	մ3	11	47,55	523,05
	Նախազգուշացնող	հատ	86	18,96	1630,56
	Առավելության	հատ	2	18,96	37,92
	Հատուկ թելադրանքի	հատ	8	18,96	151,68
	Տեղեկատվութան	հատ	14	15,51	217,14
	Լրացուցիչ տեղեկատվության	հատ	14	15,51	217,14
	Արգելափակոցներ				0,00
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում (d=4մմ, քայլ -4 մ, մետաղական սյուն, կանգնակ -792հատ ավազակոպիճ	գծ.մ	3610	22,93	82777,30
		մ3	25,74	3,10	79,79
2	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	934	5,43	5071,62
	Եզրապատեր խամքարե բետոնից ՊԿ48+38-ՊԿ48+73 ՊԿ50+70-ՊԿ51+20 /0.4x0.6x2մ-34 հատ/				0,00
1	Հիմքի խամքարե բետոն B20	մ3	6	51,37	308,22
2	Իրանի խամքարե բետոնից B20	մ^3	16,32	52,43	855,66
3	Եզրապատի սվաղում	մ2	125,12	1,96	245,24
4	Եզրապատի ներկում	մ2	125,12	0,60	75,07
	Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ^2				0,00
	Համատարած 1.1	կմ	5,682	130,22	739,91
	Ընդհատուն 1:3 (1.5)	կմ	4,538	56,06	254,40
	Ընդհատուն 3:1 (1.6)	կմ	2,2	105,50	232,10
				9.Ընդամենը	**95 182,30**
X	**Ե/բ կամրջի վերանորոգում ՊԿ52+69-ում**				
1	Զուգունե ոչ պիտանի բազրիքների ապատեղակայում/վերադարձ սեփականատիրոջը	տոն	0,09	27,97	2,52
2	Գոյություն ունեցող քայքայված եզրաքարերի քանդում տեղափոխում լցակույտ 6.0կմ	մ3	0,54	1,40	0,76
3	տեղափոխում լցակույտ 6.0կմ	տոն	1,296	0,59	0,76
4	Ա/բ շերտի քանդում h=10սմ,	մ3	7,2	5,15	37,08
5	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ	տոն	15,84	0,98	15,52
6	Նույնը բետոնե պաշտպանիչ, ջրամեկուսիչ և հարթեցնող շերտերը h=11սմ	մ3	7,92	30,97	245,28
7	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ/	տոն	19,008	0,98	18,63
8	Դեֆորմացիոն կարի քանդում բարձում ինքնաթափ ձեռքով: Տեղափոխում լցակույտ 6կմ	գծ.մ	22	2,37	52,14
9	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ/	տոն	0,55	0,98	0,54
10	Աջից քայքայված 2-րդ կողավոր սալի երկայնական միաձուլման բետոնի կազմատում հարվածահատ մուրճով	մ3	0,21	26,25	5,51
11	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ/	տոն	0,504	0,98	0,49
12	ПР-6 կողավոր սալի ապատեղակայում-1 հատ, բարձում,	մ3	1,08	7,49	8,09
13	տեղափոխում լցակույտ 6.0կմ	տոն	2,7	0,59	1,59
14	3 շերտ տոլի փռում սալի տակ	մ2	2,1	8,78	18,44
15	Նոր ПР-6 կողավոր սալի տեղակայում	հատ	1	461,20	461,20
16	Երիթային կցանման միաձույլ բետոն B30	մ3	0,21	126,62	26,59
	պարույր AIØ3մմ	կգ	4,06	0,73	2,96
17	դեֆորմացիոն կարերի իրականացում	գծ.մ	22	42,10	926,20
18	Բետոնե հարթեցնող շերտ h=3-15սմ B20	մ3	6,48	55,59	360,22
19	Ջրամեկուսացում техноэласт Б-ով, բետոնե ամրանավորված պաշտպանիչ շերտի իրականացում միաձույլ բետոնով B25 երթևեկելի մասում h=4սմ	մ2	72	7,52	541,44
	բետոն B25	մ3	2,618	58,68	153,62
	Ցանց10x10սմ	մ2	56	1,78	99,68
20	Միաձույլ բետոնե անվահիրիչների իրականացում B20/0.2x0.5x6/x2	գծ.մ	12	19,23	230,76
21	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ2	56	4,18	234,08
22	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ2	56	3,20	179,20

23	Մայթերի մանրահատիկ ա/բետոն h=4սմ	մ2	12,6	4,28	53,93
24	Անվահրիչների ներկում	մ2	12	0,80	9,60
25	Մետաղական բազրիքների տեղակայում, գոյություն ունեցող ներդիրների վրա-12գծ.մ, ներկումով	տոն	0,242	46,36	11,22
	80x40x3մմ/мм 1-գծ.մ 5.37կգ/кг	գծ.մ	25,14	3,86	97,04
	40x20x3մմ/мм 1-գծ.մ 2.83կգ/кг	գծ.մ	11,36	2,10	23,83
	20x20x2մմ/мм 1գծ.մ-1.13կգ/кг	գծ.մ	66,24	0,83	54,98
26	Հողային աշխատանքներ հենարանների հիմքերի ողողված մասերում	մ3	6	2,90	17,40
27	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ/	տոն	11,4	0,99	11,29
28	Վաքի բետոնե մնացորդների քանդում հարվածահատ մուրճով	մ3	0,8	56,38	45,10
29	բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 6կմ	տոն	1,92	0,98	1,88
30	Հիմքերի ողողված մասերի ամրացում խամքարե բետոնով B20/0.8x0.6м	մ3	5,8	51,38	298,00
31	Հիմքերի ամրացում միաձույլ բետոնով B20/0.25x1.0м/	մ3	3	57,47	172,41
32	Հետադարձ պատերի ամրացում միաձույլ բետոնով B20	մ3	3,2	65,81	210,59
33	Հենարանների և հետադարձ պատերի քայքայված մակերեսի տորկրետ ցեմ.ավազով H=3սմ	մ2	45	4,44	199,80
				10.Ընդամենը	**4830,40**
	Ընդհանուրը				**1095411,605**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ապառաժ»ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 15700-04636690100
ՀՎՀՀ 00440378
տնօրեն
Դ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 12 » « 07 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/1Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Սյունիքի մարզի Տ-8-22,/Մ-2/-Վարդավանք-Խդրանց-Ագարակ ավտոճանապարհի կմ 0+000-կմ13+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Լաբորատոր փորձարկումներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 200 օր հետո
2	**Հողային աշխատանքներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
3	**Երթևեկելի մաս**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
4	**Ուղիղներ և մուտքեր**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 190 օր հետո
5	**Կողնակներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 190 օր հետո
7	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
8	**Հենապատեր**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 130 օր հետո
9	**Ե/բ կամրջի վերանորոգում**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 110 օր հետո

10	**Անվտանգության էլեմենտներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 200 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 200 օր հետո ,բայց ոչ ուշ, քան նոյեմբերի 30-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ապառաժ»ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 15700-04636690100
ՀՎՀՀ 00440378
տնօրեն
Դ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 12 » « 07 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2021/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված գործունեության փոփոխության համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/61	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-	876 329 284	876 329 284	876 329 284	1 095 411 605	1 095 411 605	1 095 411 605	**1 095 411 605**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ապառաժ»ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 15700-04636690100
ՀՎՀՀ 00440378
տնօրեն
Դ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 02 » « 07 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/1Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 12 » « 07 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/1Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն